ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 նոյեմբերի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

158
(2824)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՔՊ-ԱԿԱՆԸ ԼՔԵԼ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԵՐԸ

Ժամանակի ակտիվ հեղափոխական Հայկ Նազարյանը որոշել է լքել «Քաղաքացիական պայմանագրի» հավատարիմների շարքը: Նա հրապարակավ հայտնել է. «Բարի լույս հայ ժողովրդին: Որոշել եւ տեղեկացրել եմ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը, որ ցանկանում եմ դուրս գալ կուսակցությունից, պատրաստվում եմ գրել դիմումս: Որոշումը պատկանում է անձամբ ինձ, ինձ համար մաքրությունն ու արդարությունը վեհ արժեք են: Եթե որոշ մարդկանց մոտ էլ հարցեր կառաջանան, առաջիկայում «լայվով» կմանրամասնեմ: Ես հեղափոխության գաղափարին նվիրված եմ մնացել եւ կմնամ»: Ահա այսպես հերթական հեղափոխական թիմակիցը լքում է իշխող ՔՊ-ն, որը վաղուց շեղվել է այն արժեքներից, որոնց համար պայքարում էր: Նշենք, որ Հայկ Նազարյանն այն նույն հեղափոխական կերպարն է, որը սովետական կանաչ Vaz 24-ով եկել էր Հանրապետության հրապարակ՝ հեղափոխության, բայց ժամանակակից կարմիր BMW 4 coupe-ով է հեռանում «հեղափոխականներից», այսինքն՝ հեղափոխականի Vaz 24-ը դարձել է 30000-40000 դոլլար արժողությամբ մեքենա: Տեղեկացենք, որ Հայկ Նազարյանը կառավարական ամառանոցում էր աշխատանքի անցել, շփվել է իշխող էլիտայի հետ, բայց հիմա «դարձի է եկել» ու որոշել, որ ընտրում է մաքրությունն ու արդարությունը՝ լքելով ՔՊ-ն:



«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՔՊ-ական նախկին փոխմարզպետ Նարեկ Բաբայանը, որը 2022 թվականին նշանակվել էր «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության խորհրդի անդամ, ունեցվածք դիզելով, նոր մեքենաներ է ձեռք բերել: Բաբայանը, երբ նոր էր նշանակվել փոխմարզպետի պաշտոնում, վարում էր TOYOTA VITZ մակնիշի փոքրիկ մեքենա, այժմ նա աշխատանքի է գնում Toyota Land Cruiser 300 մակնիշի ավտոմեքենայով, որն արժե մոտ 150 հազար ԱՄՆ դոլար: Մեքենայի համարանիշները ոչ պակաս թանկարժեք են՝ 01OJ 001. այն արժե գրեթե 3 մլն դրամից ավելի: Նիկոլ Փաշինյանի սիրելին դառնալով՝ Բաբայանը կարիերայի մեծ աճ գրանցեց: Նաեւ կինն է Toyota Camry մակնիշի ավտոմեքենա վարում, որի արժեքը մոտավոր 40 հազար ԱՄՆ դոլար արժե: Հիշեցնենք նաեւ, որ, բացի փոխմարզպետ եղած ժամանակ կուտակած ֆինանսական միջոցներից եւ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ից ստացված եկամուտներից, Բաբայանը եկամուտներ ստանում է նաեւ «Նար-Ար» անվանումով ընկերությունից: Սյունիքի մարզում կատարվող մեծ ծավալի բոլոր աշխատանքները, որոնք կապված են եղել կոմբինատի ֆինանսավորման հետ, իրականացրել է Բաբայանը իր եւ մտերիմների ընկերությունների միջոցով. օրինակ՝ նա բացել է «Նար-Ար» (Նարեկ-Արման ընկերների) անվանումով ճանապարհաշինարարական ընկերությունը՝ հայտարարված մրցույթներին մասնակցելու եւ շահելու նպատակով:

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ գրել էր, որ Մալաթիա-Սեբաստիայի վարչական շրջանի նախկին ղեկավարի եւ նրա մի քանի աշխատակիցների բերման ենթարկելու գործին ենթադրաբար հարող Սաշա Կատվալյանը, «ԽԾԲ շարժմանը» հավատարիմ լինելով, աշխատանքի է տեղավորել կնոջը քաղաքապետարանում ու ընկերոջ՝ Արման Բարխուդարյանի կնոջը՝ Մալաթիայի թաղապետարանում: Կատվալյանը մեզ հետ զրույցում հաստատեց, որ կինը աշխատում է քաղաքապետարանում, սակայն դրա մեջ իր ավանդը չկա, քանի որ կինն ավելի վաղ է սկսել աշխատել այդ հաստիքին, քան ինքը՝ որպես խորհրդական: Չնայած նրան, որ պարոն Կատվալյանը մեզ վստահեցրեց, թե ոչ մի կոռուպցիոն սխեմա չի գործել, եւ ամեն բան տրամաբանորեն է ընթանում, բոլորն էլ ունեն աշխատելու իրավունք, այդուամենայնիվ, մեր հրապարակումից հետո հայտնվեցին այնպիսի աշխատակիցներ, որոնք հենց Կատվալյանի «թեթեւ ձեռքով» եւ «շատ պատահաբար» աշխատանքից ազատման դիմումներ են ներկայացրել: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նախկին աշխատակիցները հայտնեցին, որ Կատվալյանը ստիպողաբար, սակայն ոչ ուղիղ կերպով դրդել է աշխատանքից ազատման դիմում ներկայացնել, որպեսզի տեղավորի Մալաթիայի արդեն նախկին թաղապետ Բարխուդարյանի կնոջը. «Բարխուդարյանը Կատվալյանի մարդն է, Կատվալյանն էլ՝ Սուրեն Պապիկյանի, սակայն Բարխուդարյանի «մեջքը» միայն Կատվալյանը չէ, նա Ռուբեն Ռուբինյանի հավատարիմն է եւ բավականին կոնֆլիկտային մարդ»: ***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ կան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անտուն մի շարք պատգամավորներ, որոնք, մանդատին զուգահեռ, տան տեր են դարձել: Այժմ ներկայացնում ենք ցանկ, թե ՔՊ-ականների կանայք եւ ամուսինները որտեղ են տեղավորվել աշխատանքի հեղափոխությունից հետո: Էդուարդ Աղաջանյանի կինը՝ Վիկտորյա Այդինյանը, զբաղեցնում է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի խորհրդականի պաշտոնը: Սիսակ Գաբրիելյանի կինը՝ Անի Բաղդասարյանը, Հանրային հեռուստաընկերությունում զբաղեցնում է խմբագրի հաստիքը: Վիլեն Գաբրիելյանի կինը՝ Նարինա Առքելովան, զբաղեցնում է Միասնական սոցիալական ծառայության ավագ մասնագետի պաշտոնը: Տաթեւիկ Շահումյանի ամուսինը՝ Արսեն Մխիթարյանը, զբաղեցնում է Ազգային անվտանգության ծառայության ավագ ինժեների պաշտոնը: Հռիփսիմե Գրիգորյանի ամուսինը՝ Դավիթ Կարապետյանը, զբաղեցնում է ՀՀ արտաքին գործերի նախարարի խորհրդականի պաշտոնը: Նարեկ Գրիգորյանի կինը՝ Մարիետա Նիկոյանը, աշխատում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի առաջատար մասնագետի պաշտոնում: Արման Եղոյանի քույրը՝ Աննա Եղոյանը, աշխատում է «ՀայԷկոնոմԲանկ»-ում որպես միջին եւ փոքր վարկերի տրամադրման բաժնի գլխավոր մասնագետ: Բաբկեն Թունյանի կինը՝ Քնարիկ Իսոյանը, աշխատում է Կադաստրի կոմիտեում: Արմեն Խաչատրյանի կինը՝ Մարիամ Մինասյանը, հանդիսանում է Երեւանի պետական հումանիտար քոլեջի տնօրենը: Որդին՝ Էդուարդ Խաչատրյանը, ՀՀ ԱԺ փորձագիտական վարչության պետահիրավական փորձաքննությունների բաժնի փորձագետ է: ***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

ԶՐՈՒՅՑ

«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՀԿ ԿՀԻՄՆԻ

Արցախի «Արդարություն» կուսակցությունը մտադիր է Հայաստանում հասարակական կազմակերպություն հիմնել: Մանրամասների շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Արդարություն» կուսակցության պատգամավոր Մեսրոպ Հակոբյանի հետ:

-Տիկին Հակոբյան, հայտարարել էիք, որ հասարակական կազմակերպություն եք ցանկանում հիմնել: Ո՞ւմ գաղափարն է դա, եւ ի՞նչ է այն ենթադրում, ինչո՞վ է զբաղվելու այդ կազմակերպությունը:

-Իմ, մեր կուսակցության ղեկավարի եւ, առհասարակ, մեր կուսակցության նախաձեռնությունն է, բայց սա ոչ թե քաղաքական գործունեություն է լինելու, այլ հենց հասարակական բնույթ է կրելու, որի նպատակը կապիտալի պահպանումն է լինելու, որովհետեւ ես այս մեկ ամսվա ընթացքում բազմիցս շրջել, հանդիպումներ եմ ունեցել, շփվել եմ մարդկանց հետ տարբեր շրջաններում եւ այդ շփումների արդյունքում հասկացել եմ, որ մեր կապիտալը փոշիացման ճանապարհին է, եւ պետք է հրատապ քայլեր ձեռնարկել: Եթե դեռեւս Արցախի իշխանությունները խելքի չեն եկել, դեռեւս չկա որեւէ կառույց, որն այդ գործը հանձ կառնի, մենք որոշել ենք դա անել , որպեսզի մենք տեղեկություն ունենանք բոլորից, ինչքան որ հնարավոր է, եւ գուցե տարբեր ծրագրեր իրականացնենք, որոնք կպահեն եւ կպահպանեն ներսում մեր լույսը, արցախյան մշակույթը, բարբառը եւ ամեն ինչ՝ կապված Արցախի հետ, որպեսզի կուլ չգնա ոչինչ:

-Այսինքն՝ տեղահանված արցախցիների խնդիրներո՞վ եք զբաղվելու:

-Այո՛, ինչքան հնարավոր է, վեր ենք հանելու այդ խնդիրները, բացահայտելու ենք, հանրայնացնելու ենք: Ավելի մանրամասն, երբ արդեն կգրանցվի կազմակերպությունն, ու ավելի կոնկրետ հնարավորություն կունենանք ներկայացնելու, այդ ժամանակ արդեն հանրային հայտարարություն կանենք:

-Իսկ ժամկետներ կա՞ն հստակ, թե երբ եք պատրաստվում գործարկել կազմակերպությունը:

-Մոտ ժամանակներս. դեռ հստակ չէ, քանի որ նախապատրաստական աշխատանքներ են ընթանում:

-Իսկ անուն կա՞ որոշված:

-Թող մնա գաղտնիք, կիրապարակենք ավելի ուշ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆՅՈՒԴԱՐՁ

ԽՏՐԱԿԱՆ՝ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը գրում է. «Բուհերում արցախցիների նկատմամբ խտրական վերաբերմունքի մասին մտահոգիչ ահազանգեր եմ ստանում բռնի տեղահանված մեր երիտասարդ հայրենակիցներից:

Հոգեբանական ծանր վիճակում գտնվող ուսանողներն ընդգծում են, որ պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ակնհայտ տարբերակումներ եւ կողմնակալ վերաբերմունք է դրսեւորվում իրենց նկատմամբ՝ շեշտադրում կատարելով հարկադրաբար ՀՀ բուհերում հայտնվելու եւ իրենց ներկայությամբ ավելորդ խնդիրներ հարուցելու հանգամանքի վրա:

Այս առնչությամբ ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի հետ խոսեցի առանց այդ էլ զգայուն մեր հայրենակիցների նկատմամբ ավելորդ հոգեբանական ճնշում չգործադրելու եւ հանրության մեջ չմեկուսացնելու հրամայականի մասին: Պայմանավորվեցինք, որ վերջինս խստորեն պահանջի դասախոսական կազմից արցախցի երիտասարդների հանդեպ լինել հարգալից, ընդգծել, որ նրանք արժանի են իրենց հայրենակիցների կողմից հավասար վերաբերմունքի:

Ամենօրյա ռեժիմով հետեւողական եմ լինելու ոչ միայն ԵՊՀ-ում, այլեւ ՀՀ բոլոր բուհերում նմանատիպ խնդիրների բարձրաձայնմանը եւ կարգավորմանը: Կրթական հաստատությանն անհարիր այս

դրեւորման կրկնության դեպքում հանրայնացնելու եմ անթույլատրելի վարքագիծ ցուցաբերած դասախոսների անուն-ազգանունները»:

ՆՇԱՆԱԿՈՒՄԸ՝ ԿՌՎԱԽՆՁՈՐ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վարչական շրջանների ղեկավարների նշանակման հարցը նոր կռվախնձորի թեմա է դարձել ու դժգոհություններ առաջացրել նախկին թաղապետերի մոտ:

Ինչպես հայտնել էինք, Տիգրան Ավինյանն իրենց պաշտոններում վերանշանակել էր Կենտրոն, Քանաքեռ-Զեյթուն, Նուբարաշեն, Ավան, Շենգավիթ, Էրեբունի, Նորք-Մարաշ, Արաբկիր եւ Աջափնյակ վարչական շրջանների ղեկավարներին:

Նոր Նորք, Դավթաշեն եւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում ՔՊ-ն իր տեղը զիջել էր իրենց հետ կոալիցա կազմած «Հանրապետություն» կուսակցությանը:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար էր նշանակվել ԵԿՄ Երեւանի խորհրդի նախագահ Ռոմիկ Մխիթարյանը, Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար էր նշանակվել Տիգրան Տեր-Մարգարյանը, իսկ Դավթաշենում՝ Ալբերտ Հովասափյանը: Վարչական շրջանի նորանշանակ երեք ղեկավարներն էլ «Հանրապետություն» կուսակցությունից են:

Վերջերս քրեական սկանդալի մեջ հայտնված Մալաթա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին ղեկավար Արմեն Բարխուդարյանը երկար անգործ չմնաց: Կարճ ժամանակ անց նա նշանակվեց ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանի խորհրդական. այդ պաշտոնը նա զբաղեցնում էր մինչեւ թաղապետ նշանակվելը:

Նոր-Նորք վարչական շրջանի նախկին ղեկավար Արմեն Մհերյանի եւ Դավիթաշեն վարչական շրջանի նախկին ղեկավար Ռոման Համբարձումյանի հարցը մնում է օդում կախված:

Սեպտեմբերի 17-ի ավագանու ընտրությունների ժամանակ Մհերյանն ու Համբարձումյանը ջանք ու եռանդ չեն խնայել իրենց «կուռացիայի» տակ գտնվող վարչական շրջաններում ՔՊ-ի համար ձայներ ապահովելու համար:

Հիմա, սակայն, փաստացի նրանք մնացել են անգործ, ու դժոհություններ կան ՔՊ-ից, որ իրենց ջանքերը չեն գնահատել ու այսօր իրենց առանց պաշտոն են թողել:

ԴԱՏԱԽԱԶԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

Շիրակի մարզի դատախազ Արմեն Չիչոյանը պաշտոնի նշանակվել է 2022 թվականի հոկտեմբերի 22-ին: Արմեն Չիչոյանը հարուստ կենսագրություն ունի, այս համակարգում փորձառու է. 1994 թվականից սկսած՝ շուրջ 28 տարի դատախազությունում է աշխատել: Այս ընթացքում հասցրել է մեծ եկամուտներ ստանալ եւ կուտակել:

Այսպիսով, Չիչոյանն այս տարիների ընթացքում ձեռք է բերել 3 բնակարան բազմաբնակարան շենքում եւ մեկ հողամաս:

Բնակարաններից մեկը ձեռք է բերել 2020 թվականին Երեւանի Ավան վարչական շրջանում, Արաբկիր վարչական շրջանում գտնվող բազմաբնակարան շենքում գտնվող բնակարանը 2005 թվականին ժառանգություն է ստացել, սակայն ում կողմից՝ Չիչոյանը չի նշել: Նրա հողամասը, որը գտնվում է Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքում, եւս ժառանգություն է: Չիչոյանի երրորդ բնակարանը եւս գտնվում է Գեղարքունիքի մարզում, այս անգամ՝ Գավառ համայնքում, որը կրկին ժառանգություն է ստացել դատախազը 1996 թվականին եւ չի նշել՝ ում կողմից:

Չիչոյանը հայտարարագրել է մեկ մեքենա՝ KIA մակնիշի, 2014 թվականի արտադրության, որը ձեռք է բերել 2021 թվականին, երբ Արարատի մարզի դատախազն էր: Այդ տարվա ընթացքում, այսինքն՝ 2021 թվականին, Չիչոյանն իր BMW մակնիշի մեքենան վաճառել է 1 մլն 500 հազար դրամով եւ 3 մլն դրամով գնել է KIA մակնիշի մեքենան: Դատախազի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 5 հազար դոլար եւ 4 մլն 670 հազար դրամ: Չիչոյանի կանխիկ դրամական միջոցները կազմել են 25 հազար դոլար եւ 13 մլն 689 հազար դրամ: Դատախազի՝ 2022 թվականի տարեկան եկամուտները կազմել են 13 մլն 207 հազար դրամ, որից 11 մլն 198 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ դատախազությունից: Եկամուտների 175 հազար դրամը վարկ է «Ակբա» բանկից: ՀՀ դատախազը 1 մլն 834 հազար դրամ ստացել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, որը եկամտահարկի վերադարձի սկզբունքով է ստացել՝ բնակարանի հիփոթեքի մայր գումարը մարելու համար: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 22 մլն 871 հազար դրամ, որից 22 մլն 702 հազար դրամը կազմել է բնակարանի հիփոթեքը: Հաշվի առնելով, որ հիփոթեքի ամսավճարները բավականին բարձր են, ըստ երեւույթին, Չիչոյանը կկարողանա ստացած տարեկան եկամտով եւ առկա բանկային եւ կանխիկ դրամական միջոցներով փակել հիփոթեքի գումարը, սակայն ինչու չկան այդ ֆինանսական միջոցների աղբյուրները՝ պարզ չէ: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Ժորա Չիչոյանի՝ Արմեն Չիչոյանի որդու դեմ, հնարավոր է, վարույթ հարուցվի ֆինանսական միջոցների աղբյուրները թաքցնելու համար: Նույնն է նաեւ Շիրակի մարզի դատախազի դեպքում, եւ ստացվում է, որ հայր եւ որդի ֆինանսական միջոցներ ունեն այլ աղբյուրներից, սակայն դրանք բաց եւ թափանցիկ չեն ներկայացվում: Չիչոյանը եղել է Երեւանի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալ, իսկ մինչ այդ շուրջ 16 տարի աշխատել է Գեղարքունիքի մարզի դատախազությունում: Ստացվում է, որ Չիչոյանը մարզից մարզ է տեղափոխվում՝ Գեղարքունիք, Արարատ, Շիրակ: Սպասենք, թե որ մարզն է լինելու հաջորդը, եւ ինչ առաքելությամբ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՆԱԽԿԻՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԳՈՐԾՈՎ ՎԿԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ՊԲ նախկին հրամանատար Միքայել Արզումանյանի գործով առաջին վկան հայտնի է. նա արդեն հրավիրվել է դատարան: Մեզ հասած տեղեկություններ համաձայն՝ վերջինս Պաշտպանության բանակի զինվորական Սերյոժա Իվանյանն է, մասնակցել է Շուշիի մարտերին: Գրել էինք, որ Հակակոռուպցիոն դատարան են հրավիրվելու վկաները՝ ՊՆ նախկին նախարար Սեյրան Օհանյանը, Պաշտպանության բանակի նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանը եւ ԳՇ նախկին պետ Օնիկ Գասպարյանը: Հակակոռուպցիոն կոմիտեն նախապես հաստատած վկաներից միայն չի հարցաքննի Արայիկ Հարությունյանին, քանի որ նա հակառակորդի կողմից գերեվարված է: Նշենք, որ Գլխավոր դատախազությունը պաշտոնապես հայտնել էր, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը Արցախի պատշպանության բանակի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Միքայել Արզումանյանի վերաբերյալ քրեական գործն ուղարկել է դատարան: Հիշեցնենք՝ օգոստոսի 30-ին Միքայել Արզումանյանը ձերբակալվել էր Շուշի քաղաքի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում պաշտոնեական անփութություն կատարելու մեղադրանքով: Ըստ ՔԿ-ի՝ գեներալ-լեյտենանտը 2020 թվականի հոկտեմբերի 30-ից մինչեւ նոյեմբերի 9-ը Շուշիի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում անփույթ վերաբերմունք է դրսեւորել իր ծառայողական պարտականությունների նկատմամբ՝ չկատարելով եւ ոչ պատշաճ կատարելով դրանք, ինչը անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ: Օգոստոսի 31-ին Արզումանյանի ձերբակալման ժամկետը լրացել էր, նա ազատ էր արձակվել, սակայն նրան կալանավորելու միջնորդություն էր ներկայացվել դատարան, եւ սեպտեմբերի 1-ին Արզումանյանը կալանավորվել է: Նշենք, որ Արզումանյանը ՊԲ հրամանատար նշանակվեց 44-օրյա պատերազմի վերջին փուլում՝ 2020թ. հոկտեմբերի 27-ին՝ փոխարինելով Ջալալ Հարությունյանին. նա պաշտոնից ազատվեց 2021թվականի սեպտեմբերին:

ԱՆԵԼԱՆԵԼԻ ՎԻՃԱԿՈՒՄ ԵՆ ՀԱՅՏՆՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ուժային կառույցները հայտնվել են անելանելի վիճակում Արցախում 44-օրյա պատերազմի առթիվ հարուցված, ինչպես նաեւ Արցախում բենզինի պայթյունի եւ այլ քրեական վարույթներով: Բանն այն է, որ երբ հրապարակային անդրադառնում են այս դեպքերին, հակառակորդը միջազգային կառույցներում շահարկում է այն հարցը, թե ինչ գործ ունի Հայաստանի Հանրապետությունը Ադրբեջանի տարածքում տեղի ունեցած դեպքերի հետ, որ քննություն իրականացնի:

ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՊ-Ը, ՍԵՄԻՆԱՐՆ ՈՒ ԲԱՆՏԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը մասնակցել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ)՝ Հայաստանի արդարադատության ոլորտի աջակցության ծրագրի կողմից իրականացվող «Սահմանադրական արդարադատության հարթակի» շրջանակներում կազմակերպված աշխատաժողովին: Այդ մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են ՀՀ ՄԻՊ-ից:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի եւ Սահմանադրական դատարանի աշխատակազմի համատեղ միջոցառման նպատակն էր զարգացնել Պաշտպանի եւ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կարողությունները, ինչպես նաեւ հետագա համագործակցության խթանման նպատակով ստեղծել արդյունավետ քննարկումների հարթակ:

Միջոցառմանը բացման խոսքով են հանդես եկել Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը, ՍԴ նախագահ Արման Դիլանյանը եւ ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի արդարադատության ոլորտի աջակցության ծրագրի ղեկավար Մարկ Լասմանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Անահիտ Մանասյանն ընդգծել է, որ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից սահմանադրական արդարադատությունը բացառիկ կարեւորություն ունի:

«Շատ կարեւոր է, որ սահմանադրական արդարադատության համակարգի միջոցով մարդու իրավունքների պաշտպանությունը կարողանանք իրականացնել բացառիկ պրոֆեսիոնալիզմով եւ որակյալ, ինչը հնարավոր է միայն նման նախաձեռնությունների արդյունքում ձեւավորվող երկխոսության արդյունքում»,- ասել է Պաշտպանն իր բացման խոսքում:

Անահիտ Մանասյանը հատուկ ընդգծել է նաեւ իր հանձնառությունը Պաշտպանի դիմումների հիման վրա Սահմանադրական դատարանի որոշումների կատարման պրակտիկան կատարելագործելու հարցում, քանի որ միայն որակյալ դիմումներ ներկայացնելն ու ակտեր ունենալը բավարար չեն, կարեւոր է այդ ակտերի իրացման պրակտիկան:

Որպես բանախոսներ Պաշտպան Անահիտ Մանասյանը եւ ՍԴ դատավոր Էդգար Շաթիրյանը պատասխանել են երկու կառույցների աշխատակազմի ներկայացուցիչների հարցերին:

«Ժողովուրդ» օրաթերթը հայտնում է, որ աշխատաժողովի շրջանակներում հատուկ անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՍԴ դիմելու կարգին, առանձնահատկություններին ու գործնական խնդիրներին, այդ դիմումներին ներկայացվող պահանջներին ու դրանց ընդունելիության չափանիշներին:

Աշխատաժողովի ավարտին բանախոսները վստահություն են հայտնել, որ երկխոսության մշակույթն ու հարթակը շարունակական կլինեն, արդյունքում կառույցների փոխգործակցությունն առավել արդյունավետ կդառնա:

Ավելի ուշ հայտնի դարձավ, որ Բաքվի դատարանը Վագիֆ Խաչատրյանին դատապարտեց 15 տարվա ազատազրկման:

Այս մասին «Թվիթեր»-ի իր էջում գրել է ՀՀ ՄԻՊ Անահիտ Մանասյանը:

«Լաչինի միջանցքում Ադրբեջանի կողմից առեւանգված Վագիֆ Խաչատրյանը Բաքվում դատապարտվել է 15 տարվա ազատազրկման՝ չպահպանելով մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական չափանիշներն ու երաշխիքները:

Միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները պետք է անհապաղ արձագանքեն»,-գրել է նա:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

15 ՏԱՐԻ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ

Բաքվի ռազմական դատարանը Վագիֆ Խաչատրյանին դատապարտեց 15 տարվա ազատազրկման:

Այս մասին հաղորդում են ադրբեջանական լրատվամիջոցները:

Բաքվի ռազմական դատարանի դատավոր Ջեյնալ Աղաեւի նախագահությամբ տեղի ունեցած դատական նիստում ընթերցվել է դատավճիռ, ըստ որի՝ Խաչատրյանը դատապարտվել է 15 տարվա ազատազրկման:

Ադրբեջանը Վագիֆ Խաչատրյանին մեղադրում է «Խոջալուի շրջանի Մեշալի գյուղում ապօրինի հայկական զինված կազմավորումների կազմում ցեղասպանություն իրականացնելու համար»:

ՄԱՀՎԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է ստորագրել Ազգային ժողովի պատգամավոր Մաթեւոս Ասատրյանի մահվան կապակցությամբ հանձնաժողով ստեղծելու եւ դրա անհատական կազմը հաստատելու վերաբերյալ:

«Ղեկավարվելով «Հուղարկավորությունների կազմակերպման եւ գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով եւ Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման N 6 հավելվածի 2-րդ կետով՝

1.Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Մաթեւոս Ասատրյանի մահվան կապակցությամբ ստեղծել հանձնաժողով եւ հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ 20-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնել համապատասխան առաջարկություն՝ հանձնաժողովի ներկայացրած հուղարկավորման ծախսերի մասին հաշվետվության հիման վրա»,- ասված է որոշման մեջ:

Հիշեցնենք, որ կյանքից անժամանակ հեռացել է ՔՊ խմբակցության պատգամավոր Մաթեւոս Ասատրյանը:

ԼՂ-ԻՑ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարությունը հայտնում է, որ ավարտվել է Լեռնային Ղարաբաղում տեղակայված ՌԴ խաղաղապահ զորախմբի անձնակազմի ռոտացիան, ինչպես նաեւ սպառազինության եւ ռազմական տեխնիկայի տեղափոխումը Ռուսաստանի Դաշնություն՝ պլանային վերանորոգման համար:

Ինչպես տեղեկացնում է «Ժողովուրդ» օրաթերթը, այս մասին հաղորդագրություն է տարածել Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունը:

Նշվում է, որ ՌԴ խաղաղապահ զորախումբը շարունակում է առաջադրանքների կատարումը Լեռնային Ղարաբաղում:

«ՌԴ խաղաղապահները եւս մեկ դիտակետ են փակել Շուշիի շրջանում: Ընդհանուր առմամբ, սեպտեմբերի 19-ից փակվել է 10 դիտակետ եւ 16 ժամանակավոր դիտակետ»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՍԿԱԾԱՆՔՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային ոստիկանության վարչությունում ոստիկանություն է իրականացվում՝ դարձելու Այգեհովիտ գյուղի 25-ամյա բնակչի նկատմամբ սպանության փորձ կատարելու, ապօրինի կերպով հրազեն ձեռք բերելու եւ կիրառելու դեմքի հանգամանքները:



2023թ. նոյեմբերի 04-ին՝ ժամը 13:19-ին, «Իջեւան» բժշկական կենտրոնից ահազանգ է ստացվել այն մասին, որ իրենց մոտ հրազենային վնասվածքով բուժօգնության է տեղափոխվել մի քաղաքացի:

Նույն օրը Այգեհովիտ գյուղի բնակիչը Ոստիկանությունում հանցագործության վերաբերյալ հաղորդում է ներկայացրել այն մասին, որ իր համագյուղացին կրակել է Այգեհովիտի մեկ այլ բնակչի՝ 25-ամյա երիտասարդի ուղղությամբ:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկություններով՝ նախաձեռնվել է քրեական վարույթ: Կատարվել են դեպքի վայրի զննություն, խուզարկություններ, նշանակվել են դատաբժշկական եւ դատագենետիկական փորձաքննություններ:

Կատարված քննչական, վարութային եւ այլ գործողությունների արդյունքում պարզվել են դեպքի մի շարք հանգամանքներ: Մասնավորապես՝2023թ. նոյեմբերի 04-ին՝ ժամը 12:30-ի սահմաններում, Այգեհովիտ գյուղի երկու բնակիչներ հիշյալ գյուղի հանդամասում փայտանյութի մասնատման հարցի շուրջ վիճաբանել են, որից հետո նրանցից մեկը՝62-ամյա տղամարդը, հեռացել է: Կարճ ժամանակ անց վերջինս վերադարձել է հրազենով եւ 25-ամյա համագյուղացու նկատմամբ հաշվեհարդար տեսնելու, նրան կյանքից ապօրինաբար զրկելու դիտավորությամբ իր մոտ ապօրինի պահվող հրազենով 2 անգամ նշանառու կրակոց է արձակել վերջինիս ուղղությամբ՝ երիտասարդին պատճառելով միջանցիկ հրազենային վնասվածքներ:

Հանցագործությունը 62-ամյա տղամարդը ավարտին հասցնել չի կարողացել, քանի որ դեպքի վայրում գտնվող Այգեհովիտի մեկ այլ բնակչի կողմից երիտասարդին ցույցաբերվել է բուժօգնություն:

Նշենք, որ 2023թ. նոյեմբերի 4-ին 62-ամյա տղամարդը ձերբակալվել է: Վերջինիս, ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 1-ին մասով եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով, մեղադրանք է ներկայացվել: Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, որը բավարարվել է:

Հավելենք, որ նախաձեռնված քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է: Միջոցառումներ են ձեռնարկվում դեպքի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

9 ԲՆԱԿԱՐԱՆ ԵՎ 35 ԱՎՏՈՄԵՔԵՆԱ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկություններով՝ ավարտվել է Երեւանի 27-ամյա բնակչի կողմից մի շարք բնակարանային գողությունների, խարդախության դեմքերի առթիվ նախաձեռնված բազմադրվագ քրեական վարույթի նախաքննությունը:

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնում իրականացված բազմակողմանի քննությամբ բացահայտվել է 27-ամյա երիտասարդի կողմից կատարված գողության մոտ երեք տասնյակ դեպք: Ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ 2020թ. հունիս-հուլիս ամիսներին հիշյալ երիտասարդը ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու նախնական դիտավորությամբ, վարձակալելու պատրվակով ապօրինի մուտք է գործել Երեւան քաղաքի տարբեր վարչական շրջաններում գտնվող 9 բնակարան, հափշտակել գումար եւ այլ իրեր՝ քաղաքացիներին պատճառելով տարբեր չափերի գույքային վնաս: Բացի այդ, 2021թ. տարբեր ամիսների 27-ամյա երիտասարդը հափշտակել է Երեւան քաղաքի տարբեր վարչական շրջանների մի շարք փողոցներում կայանված՝ «Լեքսուս», «Տոյոտա» եւ այլ մակնիշի 35 ավտոմեքենաների հայելիները: Հիշյալ բնակարաններից եւ ավտոմեքենաներից երիտասարդի կողմից կատարված գողությունների հետեւանքով քաղաքացիներին պատճառված վնասի չափը կազմում է ընդհանուր 15.316.000 ՀՀ դրամ:

Հավելենք, որ քննությամբ բացահայտվել են նաեւ հիշյալ երիտասարդի կողմից կատարված խարդախության դեպքեր: Մասնավորապես, սոցիալական կայքի միջոցով ծանոթանալով երկու քաղաքացիների հետ՝ վերջինս պայմանավորվածություն է ձեռք բերել նրանցից մեկի կողմից վաճառվող ոսկյա զարդերը մեկ այլ անձի անվամբ գրավ դնելու եւ գրավադրված զարդերի արժեքի չափով գումարը նրան վերադարձնելու, իսկ մյուսի կողմից վարձակալությամբ տրվող խաղային համակարգիչը վարձակալելու վերաբերյալ: 2020թ. մայիս ամսի տարբեր օրերի հանդիպելով հիշյալ քաղաքացիների հետ՝ երիտասարդը վերցրել է ընդհանուր խոշոր չափերով՝ 2.002 000 ՀՀ դրամ արժողությամբ ոսկյա զարդերը եւ 260.000 ՀՀ դրամ արժողությամբ խաղային համակարգիչը եւ, մոլորության մեջ գցելով քաղաքացիներին, խարդախությամբ հափշտակել է դրանք՝ պատճառելով ընդհանուր 2.262.000 ՀՀ դրամի վնաս: Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ 27-ամյա երիտասարդին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասով (7 դրվագ), 254-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով (9 դրվագ), 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (9 դրվագ), 255-րդ հոդվածի 1-ին մասով եւ 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

ԱՊՕՐԻՆԻ

ԹՄՐԱՆՅՈՒԹ ԵՆ ՊԱՀԵԼ, ՕԳՏԱԳՈՐԾԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հոկտեմբերի 30-ին Արագածոտնի պարեկները Արագածոտն գյուղի խաչմերուկում, ապօրինի թմրանյութ պահելու եւ օգտագործելու կասկածանքով, ձերբակալել ու ոստիկանության Աշտարակի բաժին են տեղափոխել Շիրակի մարզի Ջրառատ գյուղի 20 եւ 28 տարեկան երկու բնակչի, իսկ 28-ամյա երիտասարդի վարած «Մերսեդես» մակնիշի մեքենան տեղափոխվել է բաժնի պահպանվող հատուկ տարածք: Մեքենայի բեռնախցիկի տուփում հայտնաբերվել է կանեփանման զանգված: 20-ամյա երիտասարդը հայտնել է, որ թմրանյութն իրենն է:

Նույն օրը Արագածոտնի պարեկները, թմրանյութ պահելու եւ օգտագործելու կասկածանքով, Աշտարակի Վանի հերոսների փողոցում հայտնաբերել, ձերբակալել ու, իր վարած «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայով հանդերձ, բաժին են տեղափոխել Աշտարակի 54-ամյա մի բնակչի: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում նոյեմբերի 1-ին զննություն է կատարվել նրա տանը եւ մեքենայում: Տնից իրավապահները հայտնաբերել են 400 գրամ, իսկ մեքենայում՝ 10 գրամ կանեփանման զանգված: Աշտարակցին հայտնել է, որ հայտնաբերվածը թմրանյութ է: Կանեփն ինքն է աճեցրել:

Նոյեմբերի 1-ին Աշտարակի համայնքային ոստիկաններն ու Արագածոտնի պարեկները ճանապարհային ոստիկանության նախկին անշարժ հեռակետի մոտ հայտնաբերել, ապօրինի թմրանյութ պահելու եւ օգտագործելու կասկածանքով ձերբակալել ու, իր վարած «Մերսեդես»-ով հանդերձ, բաժին են տեղափոխել 25-ամյա մի երիտասարդի: Նրա խուզարկությամբ հայտնաբերվել է մոխրացած հետքերով կաթուցիչ, իսկ քրեական վարույթի շրջանակում իրականացված զննությամբ մեքենայում հայտնաբերվել է կանեփանման զանգված:

Նոյեմբերի 2-ին Արագածոտնի մարզի պարեկները Երեւան-Գյումրի ճանապարհին լուսային անսարքության համար կանգնեցրել են Պարտիզակ գյուղի 29-ամյա երիտասարդի վարած «Մերսեդես»-ը: Մեքենայից դուրս գալիս երիտասարդը գրպանից թղթե փաթեթ է նետել: Ապօրինի թմրանյութ պահելու եւ օգտագործելու կասկածանքով նա ձերբակալվել ու, մեքենայով հանդերձ, տեղափոխվել է ոստիկանության Թալինի բաժին: Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում դեպքի վայրի զննություն է կատարվել: Հայտնաբերված փաթեթում մարիխուանայի նմանվող զանգված կար:

Դեպքերի առթիվ կազմված փաստաթղթերն ուղարկվել են Արագածոտնի մարզային քննչական վարչություն:

Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 6-ից 7-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 83 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԱՊ ՈՒՆԻ՞ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ

Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը դիմել է համայնքի ավագանուն՝ հայտնելով, որ Դիլիջանի համայնքապետին է դիմել «Գրին ռոք մեեջմենթ գրուպ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Վարազդատ Ներսիսյանի, եւ հայտնել, որ այդ ընկերության սեփականությունը հանդիսացող՝ Դիլիջան քաղաքի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 3/1 հասցեի 2800 քմ մակերեսով հողամասում է գտնվում դեռեւս 1936թ. կառուցված Աղասի Խանջյանի ամառանոցի շենքը, որը ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 30-ի N 1929-Ն որոշման համաձայն՝ ընդգրկված է Տավուշի մարզի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում՝ որպես հանրապետական նշանակության հուշարձան: Այդ շենքը ՀՀ կառավարության կոմիտեի կողմից հաշվառված է որպես ինքնակամ շինություն, վթարային է եւ գտնվում է կիսավեր վիճակում:

«Գրին ռոք մենեջմենթ գրուպ» ընկերությունը, կարեւորելով հուշարձանների պահպանման եւ վերականգնման անհրաժեշտությունը, պատրաստակամություն է հայտնել ընկերության սեփականությունը հանդիսացող 2800քմ հողամասը վերջինում առկա հուշարձան հանդիսացող շենքի պահպանման եւ սպասարկման նպատակով, որպես սեփականություն, անհատույց փոխանցել (նվիրել) Դիլիջան համայնքին: Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն «Գրին ռոք մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի կողմից Դիլիջան քաղաքի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 3/1 հասցեի 2800 քմ հողամասը վերջինում առկա հուշարձան հանդիսացող շենքի պահպանման եւ սպասարկման նպատակով, որպես նվիրատվություն, Դիլիջանի համայնքին ընդունելու համաձայնություն տալու վերաբերյալ:Համայնքի ավագանին 2023թ. նոյեմբերի 2-ի նիստում քվեարկությամբ հավանություն է տվել նշված 2800 քմ հողամասը ընդունելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

«Գրին ռոք մեեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի ինտերնետային կայքում, որպես այդ ընկերության հիմնադիր, նշված է Դիլիջանում ծնված, Շվեյցարիայում ապրող Մարետա Գեւորկյանը, որը՝ որպես ձեռնարկատեր, միանձնյա տիրապետում է Հայաստանում գործող Evocabank-ի բաժնետոմսերի 100%-ին: 2019 թվականին լրագրողական նյութ ենք պատրաստել Դիլիջանում Խանջյանի ամառանոցի մասին. այն ժամանակ Դիլիջանի քաղաքապետարանից «Ժողովուրդ» օրաթերթին ասացին, որ 2014 կամ 2015 թվականին այդ տարածքը մասնավոր գործարարից գնել է հայտնի գործարար Ռուբեն Վարդանյանը: Արցախում ադրբեջանցիների կողմից Ռուբեն Վարդանյանին կալանավորելը կապ ունի՞ վերոհիշյալ ամառանոցը՝ 2800քմ տարածքով, Դիլիջան համայնքին նվիրաբերելու հետ, թե՞ «Գրին ռոք մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ն նոր իմացավ, որ այդ տարածքում է պատմության եւ մշակույթի հուշարձան Աղասի Խանջյանի ամառանոցը, որը վաղուց վերականգնման կարիք ունի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ հաստատվել է հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին եւ դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը:

Կարգով մանկավարժական աշխատողներին եւ սովորողներին տրանսպորտային ծառայությունների փոխհատուցում տրվում է հանրակրթության մատչելիությունն ապահովելու եւ դպրոցական բաժանորդային համակարգի ծրագրից օգտվելու նպատակով:

Հանրակրթության մատչելիությունն ապահովելու նպատակով մանկավարժական աշխատողներին եւ սովորողներին փոխհատուցումը տրվում է ՀՀ մարզերում տեղակայված հաստատությունների՝

1) այն ուսուցիչներին (նաեւ զինղեկներին, իսկ 2022 թվականի հունվարի 1-ից հետո՝ նաեւ ուսուցչի օգնականներին եւ հատուկ մանկավարժներին), իսկ 2025 թվականի հունվարի 1-ից հետո՝ նաեւ հոգեբաններին, որոնք հանդիսանում են իրենց փաստացի բնակության վայրից ավելի քան 5 կմ հեռու գտնվող այլ բնակավայրի հաստատության ուսուցիչ՝ 0.5 եւ ավելի հաստիքային դրույքով: Դրույքի այս սահմանափակումը չի տարածվում ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ցանկում ընդգրկված բնակավայրերում տեղակայված հաստատությունների մանկավարժական աշխատողների, ինչպես նաեւ տվյալ հաստատությունում դասավանդվող տվյալ առարկայի գծով միակ ուսուցիչը հանդիսացող մանկավարժական աշխատողների վրա: Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում մանկավարժական աշխատողներին փոխհատուցում չի տրվում:

2) Սովորողներին, որոնք, իրենց փաստացի բնակության վայրում հաստատության բացակայությամբ պայմանավորված կամ առկա հաստատությունում տվյալ մակարդակի ծրագրի (հաշվի առնելով նաեւ լեզվային առանձնահատկությունները, ինչպես նաեւ ավագ դպրոցներում հոսքային եւ ենթահոսքային կրթության առկայությունը) բացակայությամբ պայմանավորված, ուսումը ստանում են այլ բնակավայրում տեղակայված հաստատությունում: Սովորողներին փոխհատուցում տրվում է նաեւ քննաշրջանի ընթացքում:

Հավելենք, որ տնտեսապես արդյունավետ լինելու դեպքում հաստատության կողմից կարող են ձեռք բերվել նաեւ ուղեւորափոխադրման ծառայություններ՝ պայմանով, որ այդ ծառայություններից պետք է պարտադիր կարգով օգտվեն փոխհատուցման կարգում նշված շահառուները: Ընդ որում՝ ուղեւորափոխադրման ծառայությունների ձեռքբերման գնման տեխնիկական բնութագրման մեջ անհրաժեշտ է ներառել սահմանված բոլոր պահանջները, այդ թվում՝ վարորդին եւ նրա հագուստին ներկայացվող, ինչպես նաեւ ուղեւորափոխադրող մեքենայի տեխնիկական վիճակի պայմանների մասին դրույթներ:

Դպրոցական բաժանորդային համակարգի ծրագրից օգտվող մանկավարժական աշխատողներին եւ սովորողներին փոխհատուցում

Դպրոցական բաժանորդային համակարգի ծրագրից օգտվող մանկավարժական աշխատողներին եւ սովորողներին փոխհատուցումը տրվում է ծրագրից օգտվող եւ հաստատության տեղակայման վայրից տարբերվող այլ բնակավայրում տեղակայված ավելի քան 30 կմ հեռու գտնվող մշակութային հաստատություններ այցելելու դեպքում:

Հավելենք, որ փոխհատուցում տրվում է, եթե ծրագրի շրջանակում ավելի մոտ գտնվող մշակութային համապատասխան հաստատություն չկա: Հիշեցնենք, որ ծրագրի շրջանակում հնարավորություն է ընձեռվում տարին մեկ անգամ անվճար այցելելու մշակութային օջախներ:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթն առ այսօր, երբ թվում է, թե բոլոր խնդիրները արդեն լուծված են, Արցախից բռնի տեղահանված ուսանողներից ԵՊՀ-ի իրենց վարձավճարների փոխհատուցման հետ կապված ահազանգեր է ստանում: Ուսանողները մտահոգված են՝ վարձավճարները գոնե մասնակի փոխհատուցվելու են արդյոք, թե ոչ: Կան ուսանողներ, որոնք վարձավճարների չփոխհատուցման դեպքում ստիպված են լինելու կիսատ թողնել կրթությունը անվճարունակ լինելու պատճառով:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ԵՊՀ մամուլի խոսնակ Քնարիկ Միսակյանն ասաց, որ վերջին քննարկումների ժամանակ որոշվել է Արցախից տեղահանված ուսանողների սահմանված եւ հարակից մասնագիտությունների վարձավճարները փոխհատուցել միջինացված կերպով՝ կրթաթոշակի տեսքով:

Արցախից բռնի տեղահանված ուսանողների վարձավճարների փոխհատուցման միջինացման կարգի վերբերյալ Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեցին, որ յուրաքանչյուր մասնագիտության վարձավճարի միջինը որոշվում է Երեւանի եւ մարզերի բուհերում տվյալ մասնագիտության վարձավճարների համեմատությամբ:

«Կան մասնագիտություններ, որոնք մարզերի մասնաճյուղերում չկան: Տվյալ դեպքում բակալավրիատ կրթական ծրագրով սովորող Արցախից բռնի տեղահանված ուսանողի ուսման վարձավճարը փոխհատուցվելու է՝ չգերազանցելով 700 հազար դրամը, իսկ մագիստրատուրայի կրթական ծրագրով սովորող ուսանողներինը՝ 560 հազար դրամը»:

Հավելենք, որ Երեւանի բուհերում սովորող՝ Արցախից բռնի տեղահանված ուսանողների սահմանված եւ հարակից մասնագիտությունների վարձավճարների միջինը փոխհատուցվելու է համալսարաններին:

«Վարձերի մյուս մասի վճարումն ուսանողն իր ուսերին է վերցնելու, իսկ մարզերում սովորող ուսանողների վարձավճարները փոխհատուցվելու են ամբողջությամբ»,- տեղեկացրին Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեից:

ՀԵՏԱՋՈՏՎԵԼ ԵՆ

ԼՂ-ից բռնի տեղահանված ավելի քան 2200 հայրենակիցներ անվճար հետազոտվել են Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի շարժական կլինիկաներում:

«Ուրախ ենք տեղեկացնելու, որ ավելի քան 2200 արցախցիներ անվճար հետազոտվել են ՀՀ ԱՆ Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի շարժական բուժախտորոշիչ կլինիկաներում, որոնք նվիրաբերել է Ռուսաստանի Դաշնությունը:

Հայաստանի գրեթե բոլոր մարզեր այցելած բժշկական անձնակազմի թիմում աշխատել են թերապեւտ, մանկաբույժ, հոգեբան, նյարդաբան:

Շարժական կլինիկաներում իրականացվել են ուլտրաձայնային հետազոտություններ, ֆլյուրագրաֆիա: Քաղաքացիները ստացել են անվճար բժշկական խորհրդատվություն»:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 21 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 33-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ընթացիկ տարվա հունվար-սեպտեմբեր ամիսներին Հայաստան է այցելել 1 միլիոն 839 հազար 4 զբոսաշրջիկ՝նախորդ տարվա նույն ժամանակահատվածի1 մլն 239 հազար 394-ի փոխարեն:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին տեղեկացնում են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեից՝ ներկայացնելով միջազգային զբոսաշրջության 2023 թվականի 9-ամսյա ցուցանիշները:

Աղբյուրի տեղեկատվությամբ՝ զբոսաշրջիկների թիվը հաշվետու ժամանակահատվածում, նախորդ տարվա համեմատ, աճել է 48.4 տոկոսով:

Ըստ աշխարհագրության՝ 2023 թվականի 9 ամիսների ընթացքում Հայաստան այցելած զբոսաշրջիկների թվով առաջին տեղում ՌԴ-ից ժամանածներն են եղել, որոնք կազմել են ընդհանուրի 50.7 տոկոսը (931 հազար 695 մարդ), այնուհետեւ հաջորդում են Վրաստանից 10.1 տոկոս (185 082 մարդ), Իրանից 6.3 տոկոս (116 062 մարդ) այցելուները:

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԹՎԵՐ

2023 թվականի հոկտեմբերին նոր մարդատար ավտոմեքենաների ներմուծումը Ռուսաստան նոր ռեկորդ է սահմանել: Այս մասին հայտնում է Autostat վերլուծական գործակալությունը:

Նախորդ ամիս Ռուսաստան է ներմուծվել 86,8 հազար նոր մարդատար ավտոմեքենա: Նախորդ ռեկորդը գրանցվել էր նույն տարվա սեպտեմբերին (80,8 հազար ավտոմեքենա): Ընդամենը 10 ամսում մատակարարվել է 546,8 հազար նոր մարդատար ավտոմեքենա, ինչը չորս անգամ ավելի է՝նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Ամենից հաճախ նոր մարդատար ավտոմեքենաները ներկրվում են Չինաստանից (հոկտեմբերին բաժինը կազմել է 85%), որին հաջորդում են Ղրղզստանը (8,6%) եւ Ղազախստանը (3%):

Գործակալության տվյալներով՝ ընդամենը 10 ամսում Ռուսաստանի Դաշնություն է ներմուծվել 342,6 հազար օգտագործված ավտոմեքենա, ինչը ռեկորդային ծավալ է ռուսական ավտոշուկայի համար: Հոկտեմբերին հանրապետություն է ներկրվել 22 հազար օգտագործված ավտոմեքենա: Սեպտեմբերին գրանցվել է ընթացիկ տարվա ամենացածր ցուցանիշը՝ 17,2 հազար միավոր: Օգտագործված մեքենաները ամենից հաճախ բերվում են Ճապոնիայից (մասնաբաժինը հոկտեմբերին՝ 51,2%), երկրորդ տեղը զբաղեցնում է Հայաստանը (12,5%), երրորդը՝ Բելառուսը (12,4%):

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԱՇԱՏ ԱՐՏԱՀԱՆՈՒՄՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայաստանն այս տարվա 9 ամիսներին՝ հունվար-սեպտեմբերին, արտահանել է 5 մլրդ 120 մլն 624.3 հազար դոլարի ապրանք, ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 44.8 տոկոսով. արտահանման մեջ ամենամեծ մասնաբաժինը կազմել են թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները եւ դրանցից իրերը: Իսկ ինչ վերաբերում է երկրներին, ապա Հայաստանի համար արտահանման ամենամեծ շուկան շարունակել է մնալ Ռուսաստանը:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին են վկայում Հայաստանի վիճակագրական կոմիտեի հրապարակած ցուցանիշները:

Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) երկրներ արտահանումը կազմել է 2 մլրդ 793 մլն 730.3 հազար դոլար՝2022-ի 9 ամիսների նկատմամբ աճելով 87 տոկոսով: Իսկ դեպի Եվրամիության (ԵՄ) երկրներ արտահանումը նվազել է 5.1 տոկոսով՝ կազմելով 575 մլն 511.9 հազար դոլար:

Արտահանման ամենամեծ մասնաբաժինը գնացել է դեպի Ռուսաստան՝ ավելի քան 2 մլրդ 645 մլն դոլարի, նախորդ տարվա 9 ամիսների նկատմամբ աճը 85 տոկոս է: Այս տարվա 9 ամիսներին արտահանման երկրորդ ամենամեծ ուղղությունը շարունակել է մնալ Արաբական Միացյալ Էմիրությունները. 9 ամսում Հայաստանից ԱՄԷ արտահանումը կազմել է 665 մլն 462.6 հազար դոլար, նախորդ տարվա 9 ամիսների նկատմամբ արտահանման ծավալն աճել է 2.4 անգամ: Հայաստանից արտահանման ծավալներով երրորդ տեղում Չինաստանն է: 2023-ի հունվար-սեպտեմբերին Հայաստանից Չինաստան արտահանումը կազմել է 322 մլն 566.6 հազար դոլար, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը, ի տարբերություն Ռուսաստանի եւ Արաբական Միացյալ Էմիրությունների, շատ մեծ չէ՝ 19.9 տոկոս:

ԵՄ երկրներից ամենաշատ արտահանումն ուղղվել է դեպի Նիդերլանդներ՝ 218 մլն 716.6 հազար դոլարի, աճը 33.8 տոկոս է: Էականորեն աճել են որոշ երկրներ արտահանման ծավալները. 26.7 անգամ աճել է Ռումինիա արտահանումը, 4.6 անգամ՝ Հունաստան արտահանումը, 2.3 անգամ՝ Սլովակիա արտահանումը, եւ այլն:

Ինչ վերաբերում է արտահանվող ապրանքներին, ապա, ըստ Վիճակագրական կոմիտեի, հունվար-սեպտեմբերին Հայաստանից արտահանման մեջ ամենամեծ մասնաբաժինն ունեցել են թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները եւ դրանցից իրերը՝ 1 մլրդ 104 մլն 251.8 հազար դոլարի, նախորդ տարվա 9 ամիսների նկատմամբ աճը 84.9 տոկոս է: Արտահանման ծավալներով երկրորդ տեղում մեքենաները, սարքավորումները եւ մեխանիզմներն են՝ 898 մլն 882.3 հազար դոլարի, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճը 2.2 անգամ է: Թեեւ հանքահումքային արտադրանքի արտահանման ծավալն այս տարվա 9 ամիսներին նվազել է 12.7 տոկոսով, այնուամենայնիվ, Հայաստանից արտահանման ծավալների մեջ այն երրորդ տեղում է՝ 685 մլն 425.4 հազար դոլարով:

Արտահանման ծավալներում էական է եղել նաեւ պատրաստի սննդի արտադրանքի արտահանումը: Հունվար-սեպտեմբերին Հայաստանից արտահանվել է 633 մլն 984.7 հազար դոլարի պատրաստի սննդի արտադրանք:

Էականորեն աճել են նաեւ Հայաստանից կոշկեղենի, գլխարկների, հովանոցների, կաշվի հումքի, կաշվի, մորթու եւ դրանցից պատրաստված իրերի, փայտի եւ փայտյա իրերի եւ այլ ապրանքների արտահանման ծավալները:

ՆԱԽԱԳԻԾ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԿՍՏԱՆԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Հայաստանի Ազգային ժողովի պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովը հավանության տվեց կառավարության հեղինակած նոր օրենքի նախագծին, որով առաջարկվում է Պրոբացիայի ծառայությունը նախատեսել որպես պետական ծառայության առանձին տեսակ:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Պրոբացիայի ծառայության մասին եւ կից ներկայացված օրենքներում փոփոխությունների նախագծերի փաթեթն ԱԺ հանձնաժողովի նիստում ներկայացրեց ՀՀ արդարադատության փոխնախարար Լեւոն Բալյանը:

Բալյանը նշեց, որ Պրոբացիայի ծառայությունը, ի թիվս այլ գործառույթների, հանդիսանում է պատիժ կատարող մարմին եւ ապահովում է տուգանք, հանրային աշխատանք, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, ազատության սահմանափակման, օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելու պատիժների կատարումը: Ծառայությունն ապահովում է տնային կալանք եւ վարչական հսկողության այլընտրանքային խափանման միջոցների կատարումը, վերահսկողություն է իրականացնում պատիժները պայմանականորեն չկիրառելու, պատժի կատարումից ազատելու, պատժի պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ:

«Առաջարկվում է Պրոբացիայի ծառայությունը նախատեսել որպես պետական ծառայության առանձին տեսակ: Ներկայացված փաթեթով կարգավորվում են Պրոբացիայի ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի կազմակերպման եւ գործունեության առանձնահատկությունները, ծառայության անցնելու կարգը եւ պայմանները եւ այլն»,-ասաց Բալյանը:

Պատգամավոր Ալխաս Ղազարյանը հետաքրքրվեց, թե պետական բյուջեի վրա որքան ծախս է ավելանալու: Փոխնախարարն ասաց, որ ներկայիս տարեկան հատկացվող բյուջեի վրա զուտ որպես աշխատավարձ տարեկան ավելանում է մոտ 70 մլն դրամ: «Նախագծով առաջարկվում է ներդնել նաեւ ատեստավորման համակարգ, որը բարեհաջող անցնելու դեպքում պրոբացիայի ծառայողը կունենա ավելի բարձր աշխատավարձ ստանալու իրավունք: Դրա հաշվարկները դեռ չկան»,-ասաց Բալյանը:

Հարակից զեկուցող Արփինե Դավոյանն ընդգծեց, որ ներկայումս արդարադատության նախարարության ենթակա մարմիններ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը եւ Քրեակատարողական ծառայությունն ունեն հատուկ կարգավիճակ, երկուսն էլ հանրային ծառայության առանձին տեսակներ են: «Թեեւ Քրեակատարողական եւ Պրոբացիայի ծառայությունների միջեւ առկա են մի շարք նմանություններ, այնուամենայնիվ, Պրոբացիայի ծառայությունը, հանդիսանալով քաղաքացիական ծառայություն, չի օգտվում այն սոցիալական երաշխիքներից, որոնք սահմանվել են ոչ միայն Քրեակատարողական, այլ նաեւ Հարադիր կատարումն ապահովող ծառայության համար: Պրոբացիայի ծառայողներին եւ Քրեակատարողական ծառայողներին տրամադրվող սոցիալական երաշխիքների միասնականացման նպատակով նախագծով առաջարկվել է Պրոբացիայի ծառայողների համար սահմանել զինվորական կենսաթոշակի իրավունք»,- ասաց պատգամավորը:

Նախագիծը դեկտեմբերին կքննարկվի ԱԺ լիագումար նիստում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՎ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Մոսկվայի Ա. Ս. Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարանում բացվել է «Ուրարտուի թագավորությունը. հին Հայաստանի ժառանգությունը. Ուրաշտու-Հարմինուա-Արմինա» խորագրով ցուցահանդեսը:

Խորագրում ներառվել են Իրանում գտնվող հայտնի Աքեմենյան շրջանին պատկանող Բեհիսթունյան արձանագրության երեք լեզուներում զուգահեռաբար օգտագործված հին Հայաստանի անվանումները՝ Ուրաշտու-Հարմինուա-Արմինա:

Հատուկ ձեւավորմամբ շուրջ 400 ցուցանմուշներն այցելուներին թույլ են տալիս ոչ միայն բացահայտել մինչուրարտական, ուրարտական եւ հետուրարտական ժամանակների հերթափոխն ու փոխազդեցությունը, այլեւ պետական համակարգը, կրոնական պատկերացումները, արվեստը, արհեստները:

Հայաստանյան թանգարաններից ներկայացված նմուշները՝ ուրարտական արքաների վահաններ, սաղավարտներ, կապարճներ, արձանագրություններ, արձանագիր ափսեներ, պատկերապատ գավաթներ, արդուզարդի պարագաներ, կնիքներ, ծիսական արձանիկներ, կավանոթներ, համադրվել են ռուսական թանգարաններում պահվող որմնանկարների եւ համանման առարկաների հետ: Ներառված են նաեւ նախորդ դարից սկսած ուրարտական հուշարձանների պեղման, վերականգնման, ուսումնասիրման հետ կապված վավերագրեր, գեղարվեստական գործեր, գծապատկերներ, շոշափողական նմուշներ, ֆիլմեր եւ այլն:

Նշենք, որ ցուցահանդեսի բացմանը ներկա են եղել Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանը եւ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն Միքայել Բադալյանը: Նրանք ռուս գործընկերների հետ մասնակցել են մամուլի ասուլիսին եւ բացման միջոցառումներին: Ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն է առաջ բերել Մոսկվայի մշակութային կյանքում: Ա. Ս. Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարանի տնօրեն Ելիզավետա Լիխաչյովայի հաղորդմամբ՝ արդեն իսկ բոլոր բացատրական տոմսերը սպառվել են:

Ցուցահանդեսին հաջորդող երկու օրերին կից ցուցասրահներում հանրային դասախոսություններ են կարդացել «Էրեբունի» պատմահնագիտական թանգարանի տնօրեն Միքայել Բադալյանը եւ Հայաստանի պատմության թանգարանի գիտական գծով փոխտնօրեն Նժդեհ Երանյանը:

Ցուցահանդեսի իրականացման շրջանակում նախատեսվում է հրատարակել նաեւ գիտական կատալոգ, որի պատրաստման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ցուցահանդեսը կգործի մինչեւ 2024 թ. հունվարի 28-ը:

Նշենք, որ ցուցահանդեսը կազմակերպվել է Հայաստանի պատմության թանգարանի, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի, Երեւան քաղաքի պատմության թանգարանի, Էրմիտաժի, Ռուսաստանի պետական պատմական թանգարանի եւ Մոսկվայի «Տապան» հայկական թանգարանի համագործակցությամբ:

ՍՊՈՐՏ

ՎՆԱՍՎԱԾՔ Է ՍՏԱՑԵԼ

Անգլիայի չեմպիոն, գավաթակիր, Չեմպիոնների լիգայի գավաթակիր, Եվրոպայի սուպերգավաթակիր «Մանչեսթեր Սիթիի» 23-ամյա հարձակվող Էրլինգ Հոլանդը վնասվածք է ստացել: Նրա մասնակցությունը շվեյցարական «Յանգ Բոյզի» դեմ Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի չորրորդ տուրի հանդիպմանը հարցականի տակ է. հաղորդում է BBC-ն:

«Բորնմուտի» դեմ Պրեմիեր լիգայի նախորդ տուրի խաղում Հոլանդը փոխարինվել էր 46-րդ րոպեին: «Մանչեսթեր Սիթին» հաղթել էր 6:1 հաշվով:

«Կսպասենք բժիշկների եզրակացությանը: Եթե առաջիկա խաղից առաջ բժիշկն ասի, որ Էրլինգը պատրաստ է, ցավեր չունի, ես կհամարեմ, որ նա կարող է մասնակցել հանդիպմանը»,- ասուլիսում նշել է «Մանչեսթեր Սիթիի» կատալոնացի գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան:

«Մանչեսթեր Սիթի» - «Յանգ Բոյզ» հանդիպումը տեղի կունենա նոյեմբերի 7-ին:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ ԵՆ

Ֆուտբոլի Չեմպիոնների լիգայում մեկնարկում են խմբային 4-րդ տուրի հանդիպումները:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ պայքարի մեջ կմտնեն E, F, G, H խմբերի ակումբները:

E խմբում Մադրիդի «Ատլետիկո»-ն տանը կընդունի «Սելթիկ»-ին, իսկ իտալական «Լացիո»-ն կխաղա «Ֆեյենորդ»-ի հետ:

F խմբում Դորտմունդի «Բորուսիա»-ի մրցակիցը «Նյուքասլ Յունայթեդ»-ն է, իսկ «Միլան»-ինը՝ ՊՍԺ-ն:

G խմբում «Մանչեսթեր Սիթի»-ն սեփական հարկի տակ ուժերն է չափելու «Յանգ Բոյզ»-ի, «Ցրվենա Զվեզդա»-ն՝ «Լայպցիգ»-ի հետ:

Եվ H խմբում Դոնեցկի «Շախտյոր»-ը կփորձի գերազանցել «Բարսելոնա»-ին, «Պորտու»-ն՝ «Անտվերպեն»-ին:

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

ՀՀ ոստիկանությունը հայտարարություն է տարածել՝ հանրությանը հորդորելով 2023 թ. նոյեմբերի 10-12-ը Հայաստանի Հանրապետությունում անցկացվող Սամբոյի 2023 թվականի աշխարհի առաջնության ընթացքում հասարակական կարգի եւ հասարակական անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով՝ միջոցառման վայր՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր այցելել առանց զենքի եւ որպես զենք օգտագործվող առարկաների, ծակող-կտրող գործիքների, ապակյա տարաների, դյուրավառ նյութերի եւ նմանատիպ այլ իրերի ու առարկաների:

Նշվում է նաեւ, որ դեպի մարզահամերգային համալիր տրանսպորտային միջոցների շարժը թույլատրվելու է միայն հատուկ անցագրերով:

Ոստիկանությունը կոչ է անում կազմակերպվող հրապարակային միջոցառումների ընթացքում պահպանել համակեցության կանոնները:

ԽՆԴԻՐՆԵՐ

ԹԻՄԲԵՐԼԵՅՔԻ ՀԵՏ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բրիթնի Սփիրսն ու Ջանեթ Ջեքսոնն ընդհանուր բան ունեն. նրանք երկուսն էլ ժամանակին խնդիրներ են ունեցել Ջասթին Թիմբերլեյքի հետ. գրում է Mirror-ը:

57-ամյա Ջանեթն աջակցում է 41-ամյա Բրիթնիին իր ներկայիս խառնաշփոթի միջ: Բրիթնիի ամենացավալի պահերը Ջասթինի հետ կրկին ուշադրության կենտրոնում են նրա՝ «Իմ ներսի կինը» ինքնակենսագրականի թողարկումից հետո: 2002 թվականին իրենց բաժանումից հետո Բրիթնին խոցված էր, սակայն Ջասթինը ինքն էր բորբոքել պատմությունն այն մասին, որ Toxic հիթի երգչուհին կոտրել էր իր սիրտը՝ դավաճանելով իրեն:

Դեպքերից երկու տարի անց Ջանեթին անարգեցին, երբ երգիչը պատռեց նրա կրծկալը՝ մերկայացնելով երգչուհու կուրծքը Super Bowl-ի իրենց ելույթի ուղիղ հեռարձակման ժամանակ: Դրանից հետո Ջանեթի հեղինակությունն ու կարիերան կտրուկ անկում ապրեցին, մինչդեռ Ջասթինը բարգավաճում էր՝ բախվելով զրոյական հետեւանքների:

Աղբյուրը հայտնել է. «Ջանեթին ու Բրիթնիին դեռեւս հետեւում են քննադատությունները, եւ Ջանեթը դիմել է նրան՝ աջակցելու եւ քաջալերելու համար: Բրիթնին ապշած էր այն բանից, թե ինչպես էին Ջանեթին վերաբերվում Super Bowl-ի ժամանակ եւ զգում էր, որ նրա վրա հարձակվում էր նույն PR-մեքենան, ինչն իրեն արատավորել էր:

Երկուսն էլ կարծում են, որ նա (Ջասթինը) շատ բան ուներ շահելու՝ իրենց կոտրելով: Նրանք ունեն ընդհանուր փորձ, եւ Ջանեթը ցանկանում էր, որ Բրիթնին իմանար, որ ինքը նրա կողքին է»:

42-ամյա Ջասթինը ներողություն էր խնդրել երկու կանանցից էլ՝ նշելով. «Ես խորապես ցավում եմ իմ կյանքի այդ դեպքերի համար, երբ իմ գործողությունները նպաստել են ինչ-որ մեկի խնդրին, երբ ես չեմ բարձրաձայնել այն, ինչ ճիշտ էր: Ես հատուկ ցանկանում եմ ներողություն խնդրել Բրիթնի Սփիրսից եւ Ջանեթ Ջեքսոնից՝ երկուսից էլ առանձին, քանի որ ես հարգում եմ այս կանանց եւ գիտեմ, որ սխալվել եմ»:

Նրա ներողությունը հրապարակվել էր New York Times-ի «Framing Britney Spears» վավերագրական ֆիլմի թողարկումից հետո, որը պատմում էր այն մասին, թե ինչպես Ջասթինի պատճառով Բրիթնին զրպարտվեց ԶԼՄ-ներում: Բրիթնիի վերջին բացահայտումներից հետո, սակայն, կարելի է եզրակացնել, որ այդ ներողությունը երգչուհուն չի բավարարել:

● Նոյեմբերի 9-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Իմ կինը, Ձեր ամուսինը եւ քաղաքապետի օգնականը» ներկայացումը:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՐԿԵՐ

ՀԱՐՑ. Ուզում եմ տեղեկանալ՝ Ավելացված արժեքի հարկ վճարող կազմակերպությունը պարտավոր է արդյոք պահպանել ստացված հարկային հաշիվները, եւ եթե այո, ապա ինչ ժամկետով:

Սյուզաննա Մանուչարյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ս. Մանուչարյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի, Ավելացված արժեքի հարկ վճարող կազմակերպությունը պարտավոր է առնվազն մինչեւ ստացման տարվան անմիջապես հաջորդող հինգ տարին լրանալը պահպանել ստացած հարկային հաշիվները (այդ թվում՝ սահմանված ձեւով հաստատված էլեկտրոնային հարկային հաշիվները) կամ ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերը:

Հարկային հաշիվների, դրանց դիմաց վճարումը հաստատող փաստաթղթերի, մաքսային հայտարարագրերի պահպանման ժամկետները չեն կարող պակաս լինել ԱԱՀ-ի գծով պարտավորությունների, հաշվանցումների կամ վերադարձների հաշվին հարկային հաշվում կամ մաքսային հայտարարագրում առանձնացված ԱԱՀ-ի գումարի՝ օրենքով սահմանված կարգով մարման ժամկետից ձեռք բերված ապրանքների եւ ստացված ծառայությունների մասով հաշվանցումների դեպքում:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ԱԱՀ վճարող անձանց կողմից արտադրական եւ այլ առեւտրային նպատակներով ձեռք բերված ապրանքների կորստի դեպքում մատակարարներին (օրենքով սահմանված դեպքում՝ մաքսային սահմանին) վճարված (հարկային հաշիվներում կամ մաքսային փաստաթղթերում առանձնացված) ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման կամ վերադարձման, եթե այդ կորուստները շահութահարկով հարկման նպատակով չեն դիտվում որպես համախառն եկամտից նվազեցում:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել, թե ինչ է հողամասի կառուցապատման իրավունքը:

Ռոբերտ Մխիթարյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ կառուցապատման իրավունքը անձի իրավունքն է այլ անձի պատկանող հողամասում քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաեւ հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ՝ սահմանված կարգով կառուցել շենքեր եւ շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել եւ կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում տիրապետել եւ օգտագործել այդ գույքը (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2041-րդ հոդված):

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը կառուցապատման իրավունքով տրամադրվում են միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հռոմում նոյեմբերի 2-3-ը կայացել է Մշակութային արժեքների պահպանության եւ վերականգնման ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի (ICCROM) գլխավոր ասամբլեայի 33-րդ նստաշրջանը:

Ներկայացվել են Լեռնային Ղարաբաղի պատմամշակութային հուշարձանների պահպանության խնդիրները եւ Ադրբեջանի վարած շարունակական պետական քաղաքականությունը՝ հայկական հետքը Լեռնային Ղարաբաղից վերացնելու, պատմության եւ մշակույթի հուշարձաններն ավերելու կամ ինքնությունը կեղծելու վերաբերյալ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-2 + 2 +12 + 16
Կոտայքի լեռներ	-2 + 1 +11 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 4 + 6 +16 + 18
Գեղարքունիք	-2 + 2 + 9 + 13
Լոռի	-2 + 3 +12 + 15
Տավուշ	+ 2 + 7 +13 + 17
Արագածոտնի լեռներ	-2 + 1 + 9 + 11
Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 7 + 14 + 18

Արարատ	+ 3 + 7 +18 + 20
Արմավիր	+ 2 + 5 +17 + 19
Վայոց ձորի լեռներ	-1 + 1 +9 + 13
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 7 +17 + 20
Սյունիքի հովիտներ	+ 6 + 10 +17 + 21
Սյունիքի նախալեռներ	0 + 5 +11 + 15
ԼՂՀ	+ 6 + 10 +16 + 20
Երեւան	+ 9 + 10 +20 + 22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*